ՀԱՆԵԼԻԿԱՅԻ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС № 3, 1967

Ամսագրի առաջին հոդվածը նվիրված է Վ. Ի. Լենինի «Նամակներ հեռվից» աշխատության յուս ընծայման 50-ամյակին։ «Կուսակցության նոր քաղաքական կուրսի ակունքներում» հոդվածի հեղինակ Վ. Ն. Եվգրաֆովը, բարձր գնահատելով Վ. Ի. Լենինի այդ աշխատությունը, նշում է, որ նրանում տրված են շարժվող ուժերի խոր վերլուծությունը, երկրորդ ռուսական հեղափոխության բնույթը և ուղղությունը, տրված է պատասխաններ հեղափոխության ընթացքում դրված այնպիսի արմատական հարցերի, ինչպես պետական իշխանության, պատերազմի և խաղաղության, բոլշևիկյան կուսակցության նոր տակտիկայի, կուսակցության ծրագրի և անվան փոփոխության անհրաժեշտության մասին և այլն։ Աշխատության մեջ շարադրված և զարգացված են հեղափոխական մարքսիզմի կարևոր դրույթներ, որոնցից շատերն իրենց արժեքը պահպանում են ժամանակակից պայմաններում։

Ամսագրում «Դեպի մեծ Հոկտեմբերի 50-ամյակը» խորագրի տակ տպագրված են Ֆ. Ֆ. Պետրենկոյի «Քննադատությունը և ինքնաքննադատությունը ՍՄԿԿ-ի գործունեության մեջ», Վ. Յու. Զվերևի «Աշխատավորության շրջանում կուսակցության կողմից տարվող ռազմահայրենասիրական աշխատանքի մի քանի հարցեր», Զ. Կ. Զվեզդինի «Պետպլանի 1921—1924 թթ. գործունեության պատմությունից», Ռ. Մ. Սավիցկայայի «Վ. Ի. Լենինը և պետական կապիտալիզմի օգտագործումը 1918 թ. խաղաղ աշխատանքի ժամանակաշրջանում» և այլ հոդվածներ։

Ամսագիրն ունի «Քննարկումներ», «Հաղորդումներ», «Կոնսուլտացիա», «Քննադատություն և բիբլիոգրաֆիա», «ՍՄԿԿ-ի պատմության պրոպագանդայի և դասավանդման փորձից», «Դիտական կյանք» բաժինները։ Այս բաժիններում հետաքրքիր նյութեր են տպագրված երկրի ադմինիստրատիվ տեղաբաշխման գործում ՍՄԿԿ-ի ղեկավարության փորձի, կոմունիզմի կառուցման համար պայքարում ՍՄԿԿ-ի ստրատեգիայի և տակտիկայի, արխիվային հիմնարկների գիտա-հետազոտական գործունեության և այլ հարցերի վերաբերյալ։

КОММУНИСТ № 4, 1967

Ամսագրի 4-րդ համարը բացվում է «Դեպի մեծ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը» խորագրով։ Այդ բաժնում տպագրված են Պ. Կոլոմիյցևի «Արդյունաբերությունը գյուղատնտեսությանը», Ի. Դենիսենկովի «Կոլտնտեսային արտադրության ոլորտները», Ի. Բերխինի «Նոր տնտեսական քաղաքականությունը և նրա դերը կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում»։

Ամսագիրն ունի «Սոցիալիստական տնտեսվարության պրոբլեմը», «Գաղափարախոսություն, գիտություն, կուլտուրա», «Միջազգային թեմաներ», «Գրախոսություն և քննադատություն» բաժինները։ «Գաղափարախոսություն, գիտություն, կուլտուրա» բաժնում տպագրված են Գ. Ռոմանովի «Գիտական հետազոտությունը բարձր էֆեկտիվություն», Վ. Իվանովի «Սովետական գրականությունը գաղափարա-էսթետիկական սկզբունքների գոյացումը», Ն. Սիրիրյակովի «Ռեալիստական թատրոնի քննադատների սնանկությունը» հոդվածները։

ВОПРОСЫ ИСТОРИИ № 3, 1967

«Դեպի մեծ Հոկտեմբերի 50-ամյակը» խորագրի տակ ամսագրում հրապարակված են Ա. Վ. Իգնատևի «Ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականության սնանկությունը», Ա. Վ. Սմիռնովի «Պրոֆեսիոնալ փոփոխությունները ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգի կազմում», Խ. Պ. Ստրոդի «Մերձբալթիկայի XVIII—XIX դդ. ագրարային պատմությունը ԳԴՀ-ի բուրժուական պատմագրության մեջ» հոդվածները։ Վերոհիշյալ հոդվածներում հետաքրքիր շատ նյութեր կան ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականության, Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետության բուրժուական պատմագրության կողմից Մերձբալթիկայի ագրարային պատմության խեղաթյուրման, ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգի կազմում պրոֆեսիոնալ կազմի փոփոխման վերաբերյալ։

Ընթերցողների ուշադրությունն է հրավիրում սոցիալիստական երկու երկրների՝ Բուլգարիայի

և Չեխոսլովակիայի բարեկամական հարաբերությունների զարգացման վերաբերյալ ամսագրում տպագրված Ֆ. Պ. Պետրովի հոդվածը, որտեղ ցույց են տրված այդ երկրների բարի դրացիական հարաբերությունները սկսած XIV դարի վերջերից, երբ բուլղարներն ու չեխերը միասնական պայքար էին մղում թաթարա-մոնղոլական հորդաների, գերմանական ցեղերի, Օսմանական կայսրության նվաճողների դեմ։ Այդ երկու երկրների զարավոր բարեկամությունը և բարի դրացիական հարաբերությունը նոր ձև ու բովանդակություն ստացան գերմանական ֆաշիզմի դեմ մղած պայքարում և երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Հետաքրքրություն է ներկայացնում ամսագրի «Վիճաբանություն և քննարկում» բաժնում տպագրված Ն. Պ. Անանչենկոյի «Ազգից դեպի մարդկանց ինտերնացիոնալ ընդհանրությունը» հոդվածը, որտեղ մանրամասն քննարկվում են ազգի և մարդկանց ինտերնացիոնալ ընդհանրության հարցերը։ «Հիշողություն» խորագրի տակ տպագրված են Սովետական Միության մարշալ Կ. Ա. Մերեցկովի «Քաղաքացիական կռիվների դաշտերում», Ն. Ն. Յակովլևի «Ինչպես Քենեդին դարձավ պրեզիդենտ» և այլ հոդվածները։

ВОПРОСЫ ФИЛОСОФИИ № 3, 1967

Ամսագիրը սկսվում է Կրասնոդարի մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի ավագ դասախոս Վ. Պ. Ֆրոլովի «Արտադրության կառավարման սոցիալական ֆունկցիաների մասին» հոդվածով։ Հեղինակը մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների օրինակով հետազոտում է կառավարման սոցիալական ֆունկցիաները։

«Կենցաղը և ընտանիքը սոցիալիզմի ժամանակ» իր հոդվածում փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ա. Տ. Խարչևը լուսաբանում է սոցիալիզմի պայմաններում սովետական մարդկանց կենցաղի ու ընտանիքի փոխհարաբերությունների այնպիսի հարցեր, ինչպես կենցաղի հասկացողությունը, կենցաղն ու ընտանիքը, կենցաղի և ընտանիքի հիմնական հատկանիշները սոցիալիզմի ժամանակ, կենցաղի և ընտանիքի հետագա զարգացումը ՍՍՀՄ-ում և այլն։

Քննարկման կարգով ամսագիրը տպագրել է ՍՍՀՄ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գ. Ս. Բատիշչևի «Մարդու հասարակական-պատմական, գործուն էություն» հոդվածը, որտեղ քննարկվում է պատմագրության մեջ քիչ հետազոտված մարդու առարկայական գործունեության սկզբունքները կապված հասարակական կյանքի տարբեր կողմերի հետ։

Հետաքրքրություն են ներկայացնում ամսագրում տպագրված Վ. Ն. Շուբկինի «Քանակական մեթոդները սոցիոլոգիայում», Վ. Ի. Կրեմյանսկու «Նյութական սիստեմի կազմակերպման առաջացումը», Յու. Ա. Ժամոշկինի «Ժամանակակից կապիտալիզմի պայմաններում սոցիոլոգիայի հակասական ճակատագիրը» և այլ հոդվածներ։